# ԽՐՈՆԻԿԱ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

*Ռեսպուբլիկայի ժողտնտխորհի արդյունաբերական ձեռնարկությունների, գիտա-հետազոտական ինստիտուտների, նախագծային-կոնստրուկտորական և մյուս կազմակերպությունների ռացիոնալիզատորների ու գյուտարարների ստեղծագործական միտքը մոբիլիզացնելու նպատակով, Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության խորհուրդը և Արհեստակցական միությունների խորհուրդը 1958 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1959 թ. հուլիսի 1-ը հայտարարել են արտադրական պրոցեսների ավտոմատացման ու մեքենայացման գծով լավագույն ռացիոնալիզատորական առաջարկության, տեխնիկական կատարելագործման կամ գյուտի կոնկուրս։*

*Ժողտնտխորհի արդյունաբերական ձեռնարկություններում ու կազմակերպություններում առաջավոր բանվորներից, ինժեներա-տեխնիկական աշխատողներից և ծառայողներից ստեղծվել են կոմպլեքսային բրիգադներ, որոնց ստեղծագործական միտքն ուղղված է նորարարների մասսայական շարժում ծավալել ակտուալ խնդիրների լուծման նպատակով։ Կանոնադրության համաձայն կոնկուրսին կարող են մասնակցել ինչպես առանձին աշխատողներ, այնպես էլ արտադրության, գիտա-հետազոտական, գործնական-կոնստրուկտորական հիմնարկների և գործարանային լաբորատորիաների նորարարների խմբեր։*

*Մրցանակաբաշխության հանձնաժողովը (նախագահ՝ ժողտնտխորհի նախագահի տեղակալ Զ. Զարչյան) քննարկելու է միայն այն առաջարկությունները, որոնք ստացվել և արտադրության մեջ արմատավորվել են կոնկուրսի ժամանակաշրջանում։ Ստացված առաջարկությունները գնահատելիս հաշվի է առնվելու դրանց ամենամեծ տնտեսական էֆեկտիվությունը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ինչպես նաև մեքենայացման կամ ավտոմատացման աստիճանը և առաջարկության կիրառման շնորհիվ ազատված բանվորների քանակը։*

*Արտադրական պրոցեսների ավտոմատացման և մեքենայացման լավագույն առաջարկությունների հեղինակներին խրախուսելու համար սահմանվել է 20 դրամական պարգև, այդ թվում՝*

*երկու առաջին . . . . 5000-ական ռուբլի*
*երեք երկրորդ . . . . 3000-ական ռուբլի*
*հինգ երրորդ . . . . . 2000-ական ռուբլի*
*հինգ չորրորդ . . . . . 1000-ական ռուբլի*
*հինգ հինգերորդ . . . . 500-ական ռուբլի*

*Լավագույն առաջարկությունների հեղինակները և այն աշխատողները, որոնք ակտիվորեն մասնակցել են դրանց արմատավորմանը, պարգևատրվում են նաև Հայկական ՍՍՌ ժողտնտխորհի պատվոգրով։*

***

*Ռեսպուբլիկայի ժողտնտխորհը որոշում է ընդունել իր սիստեմում մի շարք նոր գործարաններ կազմակերպելու մասին։*

*Ոչ ստանդարտ սարքավորման և քիմիական ապարատուրայի արտադրությունն ապահովելու համար Լուսավանում ստեղծվում է քիմիական մեքենաշինական գործարան։ 1961 թ. սկսած այդ գործարանը թողարկելու է արտադրանք քիմիական արդյունաբերության արտադրական պրոցեսների հետագա մեքենայացումն ու ավտոմատացումը իրագործելու համար։*

*1959 թ. հունվարից Երևանի թերթադրլանման գործարանի բաղայի վրա, շարք կմտնի ամբարձիչատրանսպորտային ոչ ստանդարտ սարքավորում, մետաղե կոնստրուկցիաներ և թերթի գլանվածք պատրաստող ձեռնարկություն։*

*Նկատի ունենալով, որ ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը ինվենտարի ու գործիքների խիստ կարիք է զգում, Արտաշատի մեխանիկական գործարանը մասնագիտացվում է այդ արտադրանքի համար։ Միաժամանակ հաշվի են առնվելու նաև հարևան եղբայրական ռեսպուբլիկաների՝ Վրաստանի և Ադրբեջանի գյուղատնտեսության աշխատողների ինվենտարի ու գործիքների կարիքները։ Այս կապակցությամբ ժողտնտխորհը դիմել է ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետին, խնդրելով ճշտել Արտաշատի մասնագիտացվող գործարանի նոմենկլատուրան և արտադրության ծավալը։*

***

*Ռեսպուբլիկայի բնակչությանը կաթով ապահովելու գործում եղած ընդհատումների կապակցությամբ ժողտնտխորհը գործնական միջոցառումներ է նշել մատակարարումը բարելավելու համար։ Այդ նպատակով 1958 թ. սեպտեմբերից մինչև 1959 թ. հունվարը ընդլայնվել է կաթի և անքաշ կաթնամթերքների փոխադրման գոտին հետևյալ քաղաքների՝ Երևանի (Բայազեդի և Ապարանի շրջաններից), Լենինականի*

(Ամասիայի, Ղուկասյանի և Արթիկի շրջաններից) և Կիրովականի (Սպիտակի շրջանից) կաթի գործարանների համար։ Նշված շրջաններում աշնան-ձմեռային ժամանակաշրջանում արգելված է անքաշ կաթը կարագի վերամշակելը։

Ռեսպուբլիկայի Առևտրի մինիստրության առևտրական կազմակերպությունները 1959 թ. սկսած ապահովվելու են հում սերի, սերուցքի, կեֆիրի, ացիդոֆիլինի, շոռա-պանրային և այլ կաթնամթերքների անխափան մատակարարմամբ։

Ժողտնտխորհը հանձնարարել է Մսի և կաթի արդյունաբերության վարչությանը մեկ ամսվա ժամկետում մշակել ու ներկայացնել Երևանի կաթի կոմբինատում ստերիլ կաթի, ինչպես նաև չոր կաթի և կաթի պահածոների արտադրության կազմակերպման առաջարկությունները։

***

Սննդի, Կաթի և մսի արդյունաբերության վարչությունների ձեռնարկություններում Ժողտնտխորհի արտադրանքի որակի գլխավոր տեսչության կողմից կատարված ստուգման միջոցով երևան են հանվել թողարկվող արտադրանքի արտաքին ձևավորման գործում լուրջ թերություններ։ Այսպիսի շատ խախտումներ թույլ տվող ձեռնարկությունների թվումն են մայրաքաղաքի ձեռնարկությունները՝ Գինու կոմբինատը, Պահածոների գործարանը, Հրուշակեղեն-մակարոնի ֆաբրիկան և Ցուղսառնարանը։

Ռեսպուբլիկայի Ժողտնտխորհը ընդունել է գործնական որոշումներ, որոնք ուղղված են սիստեմի ձեռնարկությունների թողարկած ապրանքների արտադրանքի ձևավորումը արմատապես բարելավելու նպատակին։ Առաջարկել է Սննդի և Մսի ու կաթի արդյունաբերության վարչությունների պետերին, կցվող, կապվող արտադրանք թողարկող ձեռնարկությունների դիրեկտորներին՝ մեկ ամսվա ժամկետում միջոցառումներ մշակել արտադրանքի կցում-կապումը, էտիկետավորումը և պահեստային օպերացիաները հետագա մեքենայացման ենթարկելու համար։ Նրանց ուշադրությունը դարձվել է արտադրանքի արտաքին ձևավորման խախտումներն ու թերությունները վերացնելու, այդ տեղամասի համար աշխատողների պատասխանատվությունը բարձրացնելու և ներգործարանային վերահսկողությունն ուժեղացնելու վրա։ Մինչև 1958 թ. վերջը վերանայվելու են այն տուփերի կոնստրուկցիաներն ու ձևավորումը, որոնք օգտագործվում են հրուշակեղեն, գինիներ, կոնյակներ և այլ արտադրանք փաթաթելու համար, որից հետո դրանք հաստատվելու են Ժողտնտխորհի գեղարվեստական խորհրդի կողմից։

Ժողտնտխորհը հանձնարարել է տեխնիկական և պլանատնտեսական բաժիններին քննարկել պատրաստի արտադրանքի համար գործող էտիկետները, մեքենաների ու սարքավորման վրա ամրացվող գործարանային մարկաների և անձնագրային ադյուսակների մակագիրները ունիֆիկացնելու հարցը, ինչպես նաև կենտրոնացված պոլիգրաֆ արտադրություն ստեղծելու հարցը։

***

Արդյունաբերական ձեռնարկություններից բացի, Ժողտնտխորհը միավորում է նաև մոտ 40 պտղա-խաղողագործական ու անասնաբուծման սովխոզներ։ Վերջերս Ժողտնտխորհը քննարկեց սովխոզների գործունեությունը և գտավ, որ, չնայած եղած հնարավորություններին, անասնապահական մթերքների արտադրության պլանը չի կատարվում։ Նշվել է, որ Ժողտնտխորհի սովխոզները լուրջ ուշադրություն չեն դարձնում անասնապահության համար կերի բազա ստեղծելու վրա, որի պատճառով անասնապահական մթերքների արտադրության նախատեսված ծավալի և կերերի արտադրության պլանի միջև ճեղքվածք է առաջանում։

1959—1965 թթ. ռեսպուբլիկայի անասնապահական մթերքների արտադրության ավելացումն ապահովելու միջոցառումների վերաբերյալ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշումներն իրականացնելու նպատակով Ժողտնտխորհը գործնական միջոցներ է նշել իր սիստեմի սովխոզների գործունեությունը բարելավելու համար, որոնք ուղղված են պետական առաջադրանքների կատարմանը։

***

Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի ճյուղային վարչությունների և ձեռնարկությունների ներկայացուցիչները այցելել են Թբիլիսիի Համամիութենական առևտրական պալատի մշտական պավիլյոնի միջռեսպուբլիկական ֆիլիալը, որտեղ նրանք ընտրել են լայն սպառման ապրանքների նմուշներ։ Ժողտնտխորհը հավանություն է տվել այդ նմուշներին և որոշում է ընդունել, կուլտուր-կենցաղային և տնտեսական նշանակության ապրանքների թողարկումն ավելացնելու նպատակով, ձեռնամուխ լինել դրանց արտադրությանը։ 1959 թ. երեք եռամսյակների ընթացքում պետք է յուրացվեն և պատրաստվեն ավելի քան 5000 զույգ մանկական ու կանացի կոշիկ, 3000 զանազան պայուսակ, 5500 ջահ, «չուդո» վառարան, 6000 կաթսա-շոգեփիչ և շատ այլ առարկաներ։

Ապրանքների նոր նմուշներ ընտրելու համար 1959 թ. 1-ին եռամսյակի ընթացքում կուլտուր-կենցաղային, տնտեսական նշանակության առարկաներ արտադրող բոլոր ճյուղային վարչությունների կողմից մասնագետներ են գործուղվելու Համամիութենական առևտրական պալատ։

***

Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհուրդը և Հայաստանի Արհեստակցական միությունների խորհրդի նախագահությունը, քննարկելով սովխոզների 1958 թ. 9 ամսվա սոցիալիստական մրցության արդյունքները, որոշեց հաստատել.

Առաջին մրցանակը և փոխանցիկ Կարմիր դրոշը՝ Վեդու շրջանի «Դվին» սովխոզին, որը կաթի հանձնման պետական պլանը կատարել է 100,5%-ով, իսկ միսը՝ 145%-ով։

Երրորդ մրցանակը՝ Արտաշատի շրջանի Կալինինի անվան սովխոզին, որը կաթի հանձնման պլանը կատարել է 129,4%-ով, իսկ անասունների կշռաճինը՝ 103%-ով։

Նշվել է նաև Թալինի շրջանի «Արագած» սովխոզի լավ աշխատանքը։